ԱԼՖԱ ՖԱՐՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՇԱԽՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԹԻՄԱՅԻՆ

ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ 3 ՓՈՒԼՈՎ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. **ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ՝** Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ

2. **ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ՝** Ալֆա Ֆարմ ՓԲԸ

3. **ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ** Մրցաշարը կանցնկացվի 3 փուլով: **Ընդհանուր ՄՐՑԱՇԱՐԻ՝ 3 փուլերի հաղթող թիմի համար նախատեսած է 1 000 000 ՀՀ դրամ:** Իսկ մրցաշարի յուրաքանչյուր փուլի համար նախատեսված են հետևյալ մրցանակները՝

Հիմնական մրցանակներ	
I թիմ	Հանգստյան ուղեգիր ՀՀ տարածքում /6 անձ/
II թիմ	50.000 դրամ բալանսով նվեր-քարտ տեխնիկայի սրահի /6 անձ/
III թիմ	25.000 դրամ բալանսով Ալֆա-Ֆարմի նվեր-քարտ /6 անձ/
Հատուկ մրցանակներ լավագույն արդյունք ցույց տված մասնակից	1-ին խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
	2-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
	3-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
	4-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
	Կին մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/ Կոսմետիկ միջոցների հավաքածու
	Ամենատարեց խաղացող - Ալֆա-Ֆարմի նվեր քարտ
Սփոփիչ մրցանակներ /որոնք ընտրվելու են վիճակահանությամբ/	Երեմյան փրոջեքթս-ի ցանցից օգտվելու նվեր քարտ և Ալֆա-Ֆարմի ցանցից օգտվելու նվեր-քարտ

4. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մրցաշարին կարող են մասնակցել 2100-ից ցածր ազգային կամ միջազգային վարկանիշ ունեցող միայն չափահաս շախմատիստները:

5. ԺԱՄԿԵՏՆԵՐ

Մրցաշարի 2-րդ փուլը տեղի կունենա 2022 թվականի հունիսի 4-ին:

4 հունիսի	11:00	1-ին տուր,
4 հունիսի	11:30	2-րդ տուր,
4 հունիսի	12:00	3-րդ տուր,
4 հունիսի	12:30	4-րդ տուր,
4 հունիսի	13:00	5-րդ տուր,
4 հունիսի	13:30	6-րդ տուր,
4 հունիսի	14:00	7-րդ տուր:

6. ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

7. ՄՐՑԱԿԱՐԳ

5.1 Մրցաշարը կանցկացվի թիմային հաշվարկով՝ 4 խաղատախտակով (ցանկության դեպքում + 2 պահեստային խաղացող):

5.2 Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով /կախված մասնակից թիմերի քանակից/:

5.3 Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր: Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում

ա/ թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը,

բ/ թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը,

գ/ ըստ խաղատախտակերի վրա ցույց տված արդյունքի (1, 2, 3, 4 խաղատախտակներ):

Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

Խաղատախտակների լավագույն արդյունք ցույց տված մասնակիցների հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի կառնվի հակառակորդների միջին գործակիցը:

Ընդհանուր ակումբային մրցաշարի հաղթողը կորոշվի 3 մրցաշարերից 2-ում ցույց տված լավագույն արդյունքների հանրագումարով:

8. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Մրցաշարի յուրաքանչյուր փուլի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է **30000 ՀՀ դրամ**:

Մրցաշարի կայքէջում http://tournaments.chessacademy.am/?lang=am անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝	Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
Բանկ՝	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝	1570018417800100
ՀՎՀՀ՝	02560522

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել **թիմի անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար**:

9. ԳՐԱՆՑՈՒՄ

Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2022 թվականի հունիսի 1-ը, ժամը 18:00-ն: Կանոնադրությանը կցված հայտը միայն լրացված վիճակում կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին:

10. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք. Երևան, Շևչենկո 34/:

11. Կոնտակտային տվյալներ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, Էլ. փոստ՝ info@chessacademy.am